

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 1

(ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

5 ՅՈՒՆՈՒԱՐ 1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՄԻՆ ԱՐԴԻՒՆՔԸ (Խմբագրական)	S. Ա.
ՄՐՅԱՆԱԿ ՇՍՀՈՂ ՆՈՐԱՎԷՊԸ	Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Ծերուկին խղճահարությունը	Ս. ԱՆԳԵՂԵԱՅ
ԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թրեանայերը (1901-1902)	ՍՍՍԿԱՆ ՎԱՐԴ.
ԿԻԼԻԿԵԱՆ ՅՈՒՇԵՐ. Ծնունդի տոնը Հանքնի մեջ	Ֆ.
ՈՉ ՈՒՔ (Բանաստեղծություն)	Գ. ՊՈՒՊԼԻ
ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ. Տղուն լսողությունը	ՍԴԵՂԼԱ.
ԱՇԽԱՐՀԻ ՇՐՋԱՆԸ. Կալկաթայի մեջ	Թարգմ. 0. Զ. — Ս.
ՄԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ. «Մ.Ֆ. . . . սա ձնողները»	
ՅՈՒՇԱՅՈՒՆ	



Մասիս շաբաթաթերթի սարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌՍՈՒՆ զրո. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ զրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 բուլղի: Թղթատարական ծախսը խմբագրութեան իրայ է: Վեցամսեայ կամ ե-
 աամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն
 ամսոյ մէկէն: *Մասիս* հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ՝ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր
 ծխավաճառներուն ու Պահչե-Դաբուլի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալա-
 քիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն մոլ:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍԻ
 ՀԱՍՏԵ

دوعليده غلطده «ماسيس» غزتهسى ادارسى
 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»
 Կ. Պոլիս, Ղալաքիս, Նորասուկեան խանկ
 Rédaction de la Revue MASSIS
 Galata, Constantinople



ՌՕՍԻԱ — ROSSIA


ԱԳՍ.ՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԻԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ	34,775,642 Փրանք
Երաշխաւորութեան գումար	121,765,383 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Բարափին վրայ, Մախաւան հին տեղը
 Ընդհ. Բնէիջ
 Ա. Հի՛ՐՄԻՒԹ

Ընդհ. Գործակալ
 ՔԷՆՏՈՐ ՌԷՐԲԷՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է, Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐԻ

Չեմքի, օսքի եւ ձեռքի ու օսքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
 2. Գարաբէօյ, Քրամկէյին կայարանին Դիմաց.

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ.
 2. Սուլթան Գէյադիտ.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասարեալ երաշխաւորութիւն

Մասնակիցներ գաւառաց բոլոր բազմութեան մէջ

ՍԻՆԿԷՐԻ ԱՍՏԻԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԻՍ

ՄԱՍԻՍ Ի ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻՆ ԱՐԴԻՒՆՔԸ

ԵՒ

ՄՐՑԱՆԱԿ ԶԱՀՈՂ ՆՈՐԱՎԷՊԸ



Մեր խոստման համաձայն՝ կը փութանք ծանուցանել արդիւնքը Գրական Մրցումին զոր բացած էինք այս էջերուն մէջ :

1901 նոյեմբերի սկիզբէն մինչեւ դեկտեմբերի սկիզբը, — ձեռագիր ընդունելու համար որոշուած միամսեայ պայմանաժամը, — ընդամէնը երսուներկու նորավէպ ստացանք, մեծապոյն մտքը գաւառներէն, եւ ամէնքն ալ ծածկանուէններ կրող, որոնց կրնկերանալին՝ գոց պահարաններու մէջ՝ գրողներուն իսկական ստորագրութիւնը ու հասցէն, որոնց չի ծանօթացան ո՛չ քննիչները եւ ո՛չ Մասիսի խմբագրութիւնը : Այս երսուներկու նորավէպները նախնական քննութեան մը րովէն անցուցին Տեարք Աղեքս. Փանոսեան եւ Օրնիկ Չիֆթէ-Սարաֆ, խնամա կերպով, եւ քսան հատը բոլորովին տկար գտնելով թէ՛ գրուածքի եւ թէ՛ նիւթի տեսակէտներով, մէկդի գրին. իսկ մնացեալ տասներկուքը գասաւորեցին իրենց գնահատման համաձայն : Գ. Զօհրայ էֆէնտի, որուն հեղինակաւ որ գատաւութեանը յանձնեցինք լաւագոյն նկատուած նորավէպները, ինքն ալ իր ընթերցումը կատարելով ու կարծիքը կազմելով, երեք քննիչները մէկանց համամիա գտնուեցան ատաջնութիւն տալու «Ասպար» ծածկանունը կրող նորավէպի մը որուն վերնագիրն էր Ծերուկին խղճահարութիւնը

եւ «Տրոփուն» ծածկանունը կրող նորավէպի մը որուն վերնագիրն էր Մերժումը, — երկուքն ալ, քիչ տարբերութեամբ, յաջող գտնելով գրական ու վիպական տեսակէտներով միանգամայն : Բայց որովհետեւ Մասիսի խմբագրութիւնը միակ մրցանակ մը հաստատած էր այս առաջին անգամուան համար, եւ այդ մրցանակն ալ գրումական պարզեւ մը չէր զոր կարելի ըլլար երկու մասի բաժնել, մեր յարգելի քննիչները համաձայնեցան մըրցանակը նուիրելու «Ասպար» նորավէպին, իրենց գնահատութեան բարենիչն ալ տալով հանգերձ «Տրոփուն» նորավէպին :

Եւ բացուելով «Ասպար» ծածկանունին համապատասխանող պահարանը, յայտնուեցաւ թէ ԾԵՐՈՒԿԻՆ ԽՂՃԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ նորավէպին հեղինակն է ՎԱՀԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Մալխարայէն, ծանօթ գրագէտ Արտաշէս էֆ. Յարութիւնեանի կրտսեր եղբայրը, որ՝ գաւառային կեանքի վերաբերող իր գողարկի գրուածքներովը արժանաւոր անկիւն մը կը գրուէ. երբեմն մեր թերթերուն մէջ եւ որուն մէկ սիրուն նորավէպն ալ հրատարակեցինք նախորդ շրջանին՝ Մասիսի մէջ :

Կը շնորհաւորենք Վահան Յարութիւնեանը՝ իր այս գրական յաջողութեանը համար, որով երտունըմէկ մրցակիցներու մէջէն առաջինը կը հանդիսանայ, եւ կը հրա-

ւիբենք զինքը երկառով մը խմայնել խմբազրութեանս թէ ինչ միջոցով կուզէ որ ապահովապէս իր ձեռքը հասցնենք իբրև մրցանակ որոշուած ոսկի ժամացոյցը որ իր տրամադրութեանը ներքեւ կը գտնուի :

Ծերուկին խղճահարութիւնը, զոր կը հրատարակենք Մասիսի այս համարին մէջ, պարզ պատմութիւն մըն է, ինչպէս պիտի տեսնուի, գաւառի կեանքէն ու գաւառային ոճով, որուն մէջ ո՛չ սէր կայ, ո՛չ անակնկալ գէպք մը, եւ սակայն էնդրիկներով հիւսուած կարգ մը սիրային պատմութիւններէ, — որոնք կը վխտան ինքզինքնին նորավէպի հակառակորդ հոչակող թերթերու մէջ, անընդհանրի հակասականութեամբ մը, — գերազանցապէս վեր է, եւ անգամ մըն ալ կ'ապացուցանէ թէ նորավէպի ճիւղը մշակել փափագող զրիչները, փոխանակ տափակութիւններու մէջ լողալու եւ իրենց խելքէն միտքէն վեր նիւթերու շարժը թափառելու, լաւագոյն պիտի ընէին իրենց ապրած միջավայրին պատկերները ուրուագծելով, իրենց տեսածին ու զգացածին վրայ միայն գրելով, առանց նաեւ թերանալու ոճի գեղեցկութեան ու լեզուական խնամքի տարրական պայմաններուն մէջ :

Գ. Զօհրայ էֆ., «Ասպար»ի եւ «Տրուփուն»ի ձեռագիրները՝ վերջին ընթերցումէ մը ետքը՝ Մասիսի խմբագրութեան յանձնած վայրկեանին, սա յայտարարութիւնը ըրաւ .


— « Այս երկու նորավէպներն ալ հաւատարապէս յաջող կրնան նկատուիլ՝ զանազան տեսակէաներով, իբրև նախափորձեր գրականութեան վիպական ճիւղին : Բայց Ծերուկին խղճահարութիւնը, որուն հեղինակին ո՛վ ըւայլ գեղ չեմ գիտեր այս վայրկեանս, գաւառի կեանքը կը պատկերացնէ ու գաւառացի գրչի մը արտաբերութիւն ըւայլ կը մասնէ իր քնասահմանի ոճովը : Մասիսի անդրանիկ մրցանակը անոր նուիրելով, մեր համակրութիւնը ու քաջալերանքը արտայայտած պիտի ըլլանք գաւառային գրականութեան նկատմամբ որուն յարաճուն զարգացման ու ծաղկելուն սրտանց բաղձացող ենք Պոլսոյ գրողներս » :

Տաղանդաւոր գրագէտին այս յայտարար-

ութիւնը արձանագրելով, — որուն համամիտ ենք կատարելապէս, — կ'աւելցնենք թէ ուրախ պիտի ըլլանք եթէ այս գեղեցիկ առիթով եւ այս համեստ մրցանակով՝ գէթ բարոյական քաջալերանք մը նուիրած ու յարգանք մը ընծայած ըլլայ Մասիս, հեռուէն, գաւառացի գրագէտներուն եւ գաւառային գրականութեան :

Կը փութանք աւելցնել թէ, զրկանք մը ըրած չըլլալու համար մեր գրասէր ընթերցողներուն ինչպէս նաեւ «Տրուփուն»ի, որուն նորավէպն ալ հաւանուեցաւ ու գնահատուեցաւ մեր երեք ձեռնհաս քննիչներէն, յաջորդ թիւով պիտի հրատարակենք նաեւ այդ նորավէպը, Մերժուելը, հեղինակին իսկական ստորագրութեամբ որ մեր գրականութեան մէջ ծանօթ է մէկէ աւելի գեղեցիկ գրուած քննարկով, արձակ եւ ստանաւոր :

S. U.



Ես կ'երթայի շիսակ նամբէս անխոսոր,
Հոգիս անմեղ անուրջներով ողորուն,
Գեռ անտեղեակ հեռահեռներուն այն պղտոր,
Որոնք արտին մեքը բոյներ կը հեղուն :

Մեյ մ'ալ յանկարձ օր մը դեմքս դուն ելար :
Զինք աչքերուդ կապոյտավր վեհ ի վեհ,
Այու ձայնրդ քնարի պէս ոսկելար,
Գերեց նոգիս . շղթայեցիր զիս յուեհ :

Եւ այն օրէն չփախցի ա՛լ հեռուն,
Բունկած եր հուր մը հոգւոյս մեք անեղ,
Ու վար ինկայ ոսփիդ սակը գերք գեռուն,
Սողացի պիղծ հեռահեռներու սիւղին մեք :

Այժմ դեմքդ ունիս ստուկ մի սղայ,
Ա՛յ կորուսի հեքը նամբուս իմ նախկին .
Աւնոս սիրքս նանկիդ մեքը կը դուլայ :

Ըսէ՛ ինձ արդ նիւղը հիմայ, չքնա՛յ կին,
Դուն որ մինչ հոս բերի բռնած զիս բեւես,
Ո՛վ է բուն իսկ յանցաւորը, — դո՛ւն քէ ես :

Ֆ.

ԾԵՐՈՒԿԻՆ ԽՂՃԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

Տանկը տաէն տան . . . տանկը տոին տան . . .

Իրիկնապէս արեւին հակած ճտտոգայթնիւն զէմ վարվող քրտնաթոր դէմքը վեր վերցուց ծերուկ հողագործը : Երիչը միտած թողուց հողին մէջ , արեւելքին դարձաւ , պինդ պինդ խաչակնքեց քրտնաթէն խաչած ճակատին ու կիսամերկ կուրքին վրայ «Օսնեալ ես Աււած , օսնեալ ես Տէր» կրկնելով երկիւղած :

Ամառուան տաք իրիկուան մը յոգնած հանդարտութեան մէջ սկսած է հնչել դեղի զանգակը : Իր ստաջին զանգաղ թրթուռները կարծես կը ծուլանան սահելու դաշտերու խորատարտութիւններէն ու հազիւ կը հասնին ծերուկի ծանր ականջներու թմբուկին : Յետոյ՝ սովորականին պէս՝ վայրկեանէ մը չի լսեր ծոյլ զանգակը , այլ տարօրինակ խանդավառութիւն մը կը ստանայ հետզհետէ , իր կեռէջաւոր ձայներն աւելի թրթուռն կը դառնան , կշռութիւնը կ'արագնայ , ու խնդալից թրթուռներն ալ դժուարութիւն չեն կրեր կարծես մազլցելու լլուրներէն վեր ու մխրճելու հովիտներու լռակաց խորութիւններուն մէջ :

Չանդակին այս երկարածիզ եղանակաւորումը ծերուկին ուշադրութիւնը գրաւեց , պահ մը նայուածքը սեւեռած հոն՝ իր մաշած բազուկներուն կողմը իրենց պնդութենէն քակուած դրոշմած հողի անապին կոշտութուն՝ խորհեցաւ վայրկեան մը , եւ յանկարծ երկարատեւ զանգակահարութեան պատճառը մտարեղիով անզգալարար «կիրամուք է . . . վաղը Աււածածին է» մրմնջեց , առաջին լատին կարեւորութիւնը շեշտելով անգիտակցօրէն : Յետոյ դարձաւ նայեցաւ արտի չփորուած մասին . մէկ երկու ժամուան աշխատութեան պէտք կար սակաւին խոպան արան ամբողջովին կոշտելով ծածկուելու համար : Կնճոտս դէմքը հետզհետէ սկսաւ պայծառ

հանդարտութիւն մը ստանալ , երբ երեւակայեց տմբողջ արտը փորուած , արեւէն՝ անձրեւներէն այդ անագին կաշտերը փշրուած՝ փխրուն դարձած : Ու գազափարներու զուգորդութիւն մը տարաւ զինքը գարնան սերունացանէն մինչեւ արգասաւորութեան այն բաղձալի ժամանակը՝ երբ իր այս քրտնաթոր աշխատութիւններու պտուղը պիտի յաջողէր խելի այս խիստ հողերէն : Իսկ երբ միտքը հոտ հասաւ՝ իր յոգնած դէմքի կնճիւններուն ուղղութիւնները փոխուած էին բոլորովին , միամիտ ուրախութեան ակնյայտի արտայայտութիւն մը գծելով հոն : Բայց որոշումը հաստատապէս սուած մարդու մը պէս արագ արագ թքաւ ավերուն մէջ , չփեց իրարու եւ բաղուկներն երկարեց երկարատեւ գործածութենէն իրիչի յղկուած կոթին՝ որ աղտով քրտնաքով ջրդեղուած կը փայլի :

Հազիւ հողի քանի մը կոշտ դրոշմ «Ստեփան ախար , կիրամուք է , աշխրջին դործը դո՛ւն պըտը լինցունես ա՛» ձայնեց հողագործ մը՝ որ՝ բրիչն ուսին՝ կը վերադառնար դաշտէն ու Ստեփանի արտի եզերքէն կը շտապէր դէպի դեղին եկեղեցին :

— Բիչ մը տեղ մնաց , տգա՛յ , չձգիմ , լինցունիմ ըսի , ամա ժամէս ար պըտը մնամ . . . Ի՞նչ ըսիմ . . . Աււած մեղք չգրէ՛ , պատասխանեց ծերուկն ու կշուտոր կիրթ շարժումով մը վերստին վեր վերցուց արեւին դէմ փայլատակող բրիչն ու մխրճեց զայն չոր հողին մէջ :

Իւրաքանչիւր նմանօրինակ շարժումի չի կրնար գտնել սն իր ճիգին սաստկութիւնը մատնող ակամայ՝ ճնշուած տքուք մը՝ որ կուրծքին խորերէն բրթած՝ կոկորդը նեղելով զուրս կը խուսափի : Առաւօտէն ի վեր իր չոր ու կարծր մկանները տակացի էին , զիմացի էին խիստ հողերուն : Իրիկնադէմի զանգակը , իր հանգիստի սովորական ազդարարն

էր, բայց այս անգամ չանաաց ո՛չ անոր, ոչ իր յոգնաբեկ բազումներուն՝ որոնք սկսած էին ցաւագին կերպով զգալ բրիչի ծանրութիւնը :

Երբ հողի վերջին կոշտը բրցուց արախ վերջի անկիւնէն՝ արեւը մարը նոր էր մտած : «Փառքեզ Ասուած» հառաչեց ծերուկն ու աճապարանքով հագաւ իր տան կտաւէ դուռնատ կապոյտ էնթարին՝ փոթ չընելով կոծկել կուրծքն՝ որ ձերմակ մագերու թաւ ցուցադրութիւն մը ունի կտաւէ հաստ շապիկի սրանկիւն բացուածքէն : Յետոյ, բակի գետին մէջ թխմեց հողի կոշտերուն վրայ փորած միջոցին տեղ տեղ զիգած սէզերն ու բնոցուց իշուկին վրայ՝ որ սահմանակից արտին մէջ կարածէր՝ քիթը թարմ խոտերէն միայն ա՛յն ասեն հանելով՝ երբ հեռաւոր գոնջիւն մը ձայնակցութեան հրաւէր մը հնչեցնէր իր երկար ու ձիգ ականջներուն խորը : Ծերունկը քաշեց քուակիկը սահմանաքարին մօտ, ինք քարին վրայ կայնեցաւ ու բռնալով յոգնաբեկ սրունքը նստաւ անտունին վրան, յետոյ արագ գետնէն վերցուց բրիչը՝ զոր խանդաղատանքի անգիտակից շարժումով մը գիրկն առնելով՝ ուղղուեցաւ դէպ ի գեղ :

«Կիրամուտքը կոխած» է գեղի փողոցին մէջ : Տան ամէն անկիւնները պատացած խոռոչի անուշ բուրում մը՝ բայց դուռէ մը խոռոչի մօտ կուգայ անցորդը պարուրել միսթիկ խոհեր ներշնչելով անոք : Տպաւորութիւնը, մարտումը վարդիկնական է սակայն, դուռերու անջեւ կիներ կան հասած, անգոյթ մեղկութեամբ մը փոխելով իրենց շնորհաբեր քարերու վրայ : Անգործութիւնն ըմբռնելու յայտնի դիտում մը ունին կարծես : Կը խօսակցին շնորհէն, ամէնէն անիմաստ բաներուն վրայ : Ինքնաք, իրենց աքլորութիւններն ու հնամուքներն ուրիշներուն հարգութիւնն՝ ամէնուն ցուցադրելուն մէջ սիրտի գոհութիւն զգացողները՝ լարկան դէմքեր շինած, հառաչանքներով՝ ընդհարուած խօսակցութեան մը թեղը կը ջանան չթողուլ : Դրան մը առջեւ աղջիկ մը կանգնած է, գոգոռնի՝ բայց խուզարկու նայուածքով մը կը դիտէ փողոցի երկու երկայնքը, սպասուած

մը մատնելով ակամայ : Բայց երբ անցնի ան, սպասուածը, սպասուաբար ետ սիտի քաշուի՝ ներսի նրբոնցքի մթութեան մէջ սքողելու համար սիրաաարի ժպիտը՝ որ անկոտ կարմրութեան մը տակէն կընդունարուի : Մանկամարդ կին մը բարձրիկ քարի մը վրայ նստած է՝ ծալապատիկ ու կը ջանայ իր կաթնալից ստինքի պտուղը բերանը խոթել հիւանդկախ՝ գեղին մանկիկի մը՝ որ կը դգկայ : Գիշ անդին սալ մը իր լայն սրտէն դուրս է թափած գեղինիստ՝ անուշաբոյր յարզը՝ զոր կրտամերկ պատանի մը աճապարանքով յարդանոց կը կրէ հոանդալից պուշտուքներ արձակելով :

Ուրիշ ոչ մէկը գործի վրայ է : պատաններուն՝ անբաժան ին ու բոքը պացած են վերը տան մութ մէկ անկիւնը թաղել՝ մոռնալ շաքածուան մը ցաւն ու արտունջը՝ զոր սպասուաբար իրենց զլխուն մրմուռացած է պատան իր առանձնութեան ժամերուն : Աղջիկներու գուլպայի տանդները կարծես ձանձրացեր են ալ փափուկ մատերու քնքուշ հպումներէն, ո՛չ ալ փողոցին մէջտեղ կը սենսուի կին մը՝ որ տաշտի մը մէջ հովին տար սարկուծի կտորներէն դասելու համար ծեծուած լուրիան կամ բակլան :

Կիրամուտք է, «Կեցո՛ է, բանելը մերք է» այնքան ծանր, որքան ծանր մեղք է գրացիի այգիին եղերքէն փորել միացնել իրենինին հետ, որքան ծանր մեղք է գրացիին վրայ զրպարտութիւն մը յերբերել ու ձուլի պէս ծամծմել զայն «Կիրամուտք իրիկընով» :

Ու ամենքը սիրտի լայն գոհացումով մը կիրամուտքը անգործ կ'անցընեն, ուրիշ բանով, սուրբ կը պահեն : Վա՛յ անոր որ կը թերանոց կրօնական այս պարտականութեան դէմ : Պէտք է քաւել զայն, կի՛ է մարդ ուղէ մտնալ, Ասուած չի մտնար քաւել տալ :

Իշուկի արագ քալուածքի մը թափը՝ հողին տակ ծածկուած սալայատակի մը ցանցաւորէն երեսան ելած քարերուն վրայ : Ստեփան աղբարն է, միշտ միեւնոյն դիրքով

իշուկին վրայ գրկած է բրիչն ու մէկ ձեռքով կը ջանայ ուղղել իշուկի անանց սանձի գլուխը : Էջը չի համակերպիր , դեռ նորավարժ է : Ականջները ցցած՝ կը յամառի դարձնել գլուխը այն ուղղութեան՝ ուր կուզէ հրթալ Ստեփան : Վերջին ճիղ մը հաղիւ գայն հնազանդեցուցած՝ չարաճճի մը յանկարծ անհեթեթ ձայն մը հանելով կ'անցնի առջեւէն : Էջը կը խրաչի :

Քովընտի յախուռն սատում մը կընէ , ուրիշ մըն ալ անակնկալ ուղղութեամբ : Ատեփանի թեւերն ի գուր հաւապարակչութիւնը կը փնտաւն օդերուն մէջ : Բրիչն ինկած է գիրկէն , կը ջանայ ոտքերն ազատել աւժամեայ չուսնէ ասպանդակներէն . մէկը կ'ազատի , բայց ժամանակ չի մնար միւսն ալ ազատելու , էջը երրորդ խենթ ոտում մըն ալ ըրած է արդէն ու Ստեփան իր ոսկրուտ մարմնով սայալատակին վրայ կը գտնէ ինքզինքը՝ մէկ ոտքով ասպանդակէն կախուած : Խոտով լեցուն բակեղեւոր կը հետեւի Ստեփանի : Մտերը նստած կ'ինկեր օգնութեան կը փութան . ձեռքերին անօգուտ կերպով կ'երկարեն . դէպ ի էջու անգուսպ գլուխը՝ ստանց համարձակելու դպչիլ : Բայց կենդանին՝ առանց կասեցնելու ընթացքը՝ արագ արագ ազայելով կը ջանայ վազել՝ իր հետ քաշքշելով տարաբազդ Ստեփան աղբարը : Խեղճին գլուխը քառչուէ դնդակի մը պէս քարէ քար կ'ոտտոտէ : Ոտքին մէկը կաշկանդուած՝ ցոյց կուտայ մերկ սրունքի չոր մկաններուն վրան սեւորակ հաստ երակներու ցանց մը՝ որ տարապայման ուռած է : Տարապայման լայն վարտիքը վար սիրդուած է : Միւս ոտքը կը ճօճէ օդին մէջ անօգուտ՝ չլաջողելով յենակէտ մը գտնել : Ձեռքերը գալարումներ կուռնենան , կը ջանան կատչիլ հանդիպած խորտուբորտութիւններուն , բայց անգուսպ էջը կը շարունակէ քաշքշել զինքն իր աննշան ծանրութիւն մը՝ երբեմն բաժին հանելով ազայիներէն՝ որոնց շտաբ բարեբաղդարար օդը կը ձեծէ : Կիներ , աղջիկներ կը ճըլկեն , ամանք՝ աւելի ինքնավստահ՝ դարձեալ կը վազեն էջուն առջեւ : Բայց ան հրիտասարդ մը կուգայ վերէն : « Թ'որոս , վազդէ » կը գոչեն : Սրունքները լայն լայն

բաճալով կը շտապէ երիտասարդը , կը հասնի էջուն առջեւ , հուժկու բազուկներով կը փաթթուի վիզին ու կը կաշկանդէ գայն : Ստեփան ինքզինքը կորսնցուցած՝ հաղիւ կը զգայ թէ փրկուած է , չարժում մը կընէ , բայց լիակամ վիզը կը թողու որ գլուխը քարին դարնուի վերստին՝ ցաւոտ ծախածուութիւն մը կծկիլ սալով դէմքին վրայ : Կը վերցնեն զինքն ու էջը կը կանգն հոն՝ իր դրան առջեւ , ուր չի գիտեր թէ ինչպէս հասած է արդէն :

Թ'որոս իր քաջագործութեամբ փքացած , ժպտելով կը շարունակէ ճանքան՝ առանց նոյն խակ սպասելու որ ձերուկը ճանչնայ զինքը :

Ստեփան կը նստի իր դրան սեւին վրայ : Իր պառաւը կանչել գնաց աղջիկ մը : Ծեր կիներ այլայլած դէմքով մը՝ աճապարեց դէպի դուռը՝ ուր նստած գտաւ Ստեփան աղբարը . եւ տեսնելով արիւնի հետքերը կնճոռոտ ձակատին , ճաղատ փայլուն գլուխին ու փապարոտ բիրտ ձեռքերուն վրայ . « Ի՞նչ ես էգեր քա » հարցուց , պաշտպանող դիրք մը առնելով ձերուկին վրայ ու չկրնալով պահել այն յուզումը՝ որ կը սարսուացնէր իր կթոտ ոտքերուն վրայ հաղիւ կանգնած կոր մարմնը : Ստեփան՝ սալահար , անխօս կը մնար դեռ : Ներկայ կ'ինկեր երկու բառով հասկցուցին քուռիկին շահատակութիւնը : Պառաւը ներս գնաց , կուռայով մը շուր բերու , ստիպելով խմցուց ձերուկին ու երբ քիչ մը ապահով եղաւ թէ Ստեփան ծանր վնասներ չէր կրած , ա'լ քակեց անէճքներու շարքն ու մէկ քանի հարուած իջեցուց իշուկի քամակին՝ իր անբաժան նեցուկով : Էջը սկար հարուածներուն ազդեցութեան տակ հաղիւ թէ սթափեցաւ իր ապուշ անշարժութիւնէն՝ որուն մէջ թաղուեցաւ վերստին :

— Էջուն մը դպչիր քա՛ , մրմնջեց վերջապէս Ստեփան ջանալով ուժ մը գնել իր կերկեր ձայնին մէջ , անիկա կա խապահաղ չունի , Ասւած արաւ , էս մէխք մտայ , կերամուքք իրիկընով բանեցայ :

Այս յայտարարութիւնը ոմանց ժպիտ առ թեց , ոմանք ալ հաւանութեան դէմք մը չինեցին :

— Աս տարիքս էկայ , շարունակեց ծերը ,
տաճա կիրամուքքս աւրած չունէի . . . :

Քիչ մը լւեց ու աչքերը յամառօրէն սեւե-
ռած խորտուրորդ քարի մը «Աս տարիքս
էկայ , հայֆնէ ար ինկած չունէի . . . ինչ
խենդ ձիեր անցան ձեռքէս , վուրե՛ր դացի ,
ինչե՛ր արի . . . » :

Ու սկսաւ պատմել թէ ինչպէս անգամ
մը ընկերովի արշաւած աստեն՝ ինք գերա-
զանցած էր ամէնքը , բայց անձանօթ փոսի
մը վրայէն ցատկած աստեն ձին սահած՝ ին-
կած էր , սակայն ինք ածապարած էր արագ
ոտտուժով մը անվնաս աղատիլ , եւ թէ ձին
ալ իր կարգին ինքզինք ազատելով յաջողած
էր վերստին շարունակել արշաւը յաջո-
ղապէս :

Երբ պատմութիւնն աւարտեցաւ . «Աս էլը
ձեռքս մեզցուցի , ըսաւ , ասանկ բան
արած չունէի» . ու խօսքն ինքզինքին ուղ-
ղելով «Արտը տեղէն պըսը փախչէ՛ր , հէ՛յ
մարդ , իրեքշարթի կը փորէիր . . . ինչո՛ւ
աւրեցի էս կիրամուքքս . . . հէ՛մ աւրեցի ,
հէ՛մ թժմասանքիս դպաւ . . . » :

Բայց Թագուհի կարեց խօսքին թելը ,
վերցուց իր «մարդը» , տարաւ ներս իր մա-
միկի դեղերով խնամելու համար անոր սաա-
ցած վերքերն՝ որոնք թեթեւ էին բարեբաղ-
դարար :

Մակար ԿԱՎԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

«ՄԱՍԻՍ»Ի ԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Օսմ. Հանրային Պարտքի Վարչութեան Նիկոմիդիոյ
ճիւղին պաշտօնեաներէն Զարեհ էֆ. Ռօթաճնայեան որ
երկու տարիէ ի վեր կը վարէր Մասիս գործակալու-
քիւնը , իր գրադմանց պատճառաւ բողոքով զայն ,
Նիկոմիդիոյ մէջ Մասիս գործակալութիւնը ստանձնած
է Թաշիկ էֆ. Յճեմեան :

Նոյնպէս , Գաղատիոյ մէջ , Մասիս գործակալու-
քիւնը ստանձնած է Գանիկ էֆ. Յ. Աշրգեան :

Կր ճրարիքնք մեր հին և նոր բաժանորդները այ
սուհետև յիշեալ էֆեկտիներուն դիմն , այդ երկու քա-
ղաքներուն մէջ , Մասիս ստանալու համար :

ԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՐԲԱԶԱՅԵՐԸ

1901—1902

Ա.

Ինչ որ պիտի ըլլար եղաւ : 1901ը՝ որուն
մուտքը տարի մը տառջ ողջունեցինք , պէտք
էր որ աւարտէր եւ սահեցաւ ու գնաց , եւ
դարձեալ անհունին ու անսահմանին մէջ մար-
դոց սովորական կեանքն է որ իր սովորական
ստախտութեամբ իր ընթացքը կը շարու-
նակէ , մրցումի , հացի խնդիրներով , որոնց
մէջ թերեւս գրականութեան ծառայողները
ամենէն աւելի առաջացած ըլլալ կը թուին :

Օրաթերթեր եւ պարբերականներ մէկ
տարուան մէջ զգալի յաւելում մը կը կրեն
առանց սակայն քանակին հետ որակին
ալ աւելի ընթիր եւ աւելի ճոխ կարենալ ընե-
լաւ : Սիւնակներու առատութիւնը՝ խմբա-
գիրները կը ստիպէ , ամէնուն առջեւ բանալ
էջերը եւ այնպէս տեղի տալ հրատարակու-
թեանը այնպիսի յօդուածներու որոնք շատ
անգամ իբր քնարեր այնքան ծառայութիւն
կրնան մատուցանել հրատարակութեան՝ որքան
աֆիսնով կազմուած գեղահաստ մը :

Շատ բնական ըլլալով այս լրագրական
գրականութեան տարապայման աճումին մէջ՝
նսեմացումը գրքերու միջոցաւ գրական ար-
տադրութեանց , չեմ զարմանար այսօր երբ
տարին կը փակենք քանի մը անշնան գրքե-
րու ցանկով մը , ի բայ թողով անշուշտ դա-
սագիրքները որոնք՝ մեր մէջ՝ բարոյական եւ
ուսումնական գաղափարի համար չէ որ կը
հրատարակուին , այլ լոկ դրամ շահելու հա-
մար :

Միակ ինքնագիր երկը՝ որ առանց ասօր-
եայ կամ պարբերական մամուլին բովէն ան-
ցած ըլլալու՝ հրատարակ կ'ենլէր Կ. Պոլսոյ մէջ,
էր Մուշեղ վարդապետի Պատկերները որ
գրեթէ անշմար անցաւ մեր հրատարակութեան
մէջ որ ըսել բաներու նկատմամբ իր ճաշակը
կարուած է , եւ աւելի թեթեւ նիւթերով կը
շահագրգռուի :

Ասոր քովը պիտի դնէինք նաեւ Իզմիրի Ազգ. Հիւանդանոցին հարկարամեայ յօրեկանին առթիւ գրուած Տեղեկագիրը, եթէ համարատուութեան մը ձեւը արուած չլլար անոր, եւ եթէ քիչ սքն ալ աւելի խնամք տարուած ըլլար գործին: Այդ թերութեամբ հանդերձ, առանձնական նշանակութիւն մը ունի վերջապէս այդ Տեղեկագիրը, քանի որ աշխատութիւն մըն է:

Եթէ կուզէք, ինքնապիւր աշխատութեանց գասակարգին մէջ կրնաք մտցնել նաեւ քանի մը պատանիներու կողմէ շարագրուած ոտանաւորներու եւ կարգ մը արձակ տղայական շարագրութիւններու հաւաքածոները՝ որոնք ի նպաստ Որբանոցի մը հրատարակուեցան տարուոյ մէջ, անկարեւոր գիրքերու անցեալ ստուարաթիւ զանգուածին վրայ նորեր ալ աւելցնելու համար:

Իսկ գալով լրագիրներէ արտասպուելով կատարուած հրատարակութեանց, Կ. Պոլսոյ մէջ գիրք կալնեցին Գրասկի Մաճուրիւնը, եւ արտասահմանի մէջ՝ Թրքահայերու կողմէ գրուած՝ Մրժրեանի Հին օտեր եւ այդ օտերու մեծասուններ, Ա. Ալայոյանեանի Սքրուհի Տիւսարի վրայ ուսումնասիրութիւնը եւ Մ. Յովհաննէսեանի ԺԹ. դարու հայ դպրութեան ինկալիս պատմութիւնը:

Հիսուկ բնական է որ կարգը թարգմանութեանց եկաւ, եւ կը յուսաք թերեւ թէ բաւական ճոխ ցանկ մը պիտի տեսնէք այդ կարգին վրայ, քանի որ տասնեակ մը տարիներ առաջ մէկ տարուան մէջ ստուարաթիւ թարգմանութիւններ ունեցած ենք: Չէ՛, շատ սխալ պիտի ըլլայ ձեր կարծիքը եւ մեծ՝ ձեր յուսախարութիւնը, եթէ երբեք այդպիսի յոյս մը ունենաք: Մէկ հատիկ թարգմանութիւն մը ունեցանք այս տարի. Օննիկ Չիֆթէ-Սարաֆի Փիչխտիային աշկերտը:

Չեմ գիտեր թէ այսքան ճզճիմ արդիւնք մը ունենալ յետոյ ինչպէ՞ս եղաւ որ զտուեցան մեր մէջ գրագէտներ որոնք միամտութիւնը ունեցան կարծելու թէ գրականութիւն մը ունինք այսօր եւ մտածեցին խորհիւ ու խորհրդակցել վազուանին վրայ՝ չեղածը եղածէն սեպելով շունչ ու միտք սպա-

նեցին վազուան հացը ճարելու համար, մինչդեռ այսօրուանը կը պակսէր:

Շատ բան գրեցին, շատ վիճարանեցան, խօսքերը միայն մնացին, արդիւնքները չեղեցան: Ոչ մէկը իր գիտցածէն-չգիտցածն ալ մէջը տանելով-չեղեցաւ, մէկը ելաւ գրականութեան մէջ ցաւագարութիւն փնտռեց, եւ ուրիշ մըն ալ ելաւ առողջութեան եւ սղախոհութեան յորդորներ կարգաց մեր պիտուն: Ըստ սովորութեան, հին գրողները նորերուն հետ կուրի բռնուեցան, նորերը տեղ կը պահանջեն, հիները կը խնդան, «դուն հին ես, ես նոր եմ» յի խօսքեր կը պտտին: Բնութիւնն ալ իր գործը կը տեսնէ, եւ մեծէ կը խլէ կաննէ յաջորդաբար շարք մը վաստակաւորներ՝ ոմանք ա՛լ գործելու անկարող դարձած, ոմանք դեռ գեղեցիկ յոյսերով՝ արտադրելու բոլորովին ատակ՝ կը թառամին խորշակէ մը չարցածի պէս, կեանքէ ու արեւէ զրկուելով:

Թրքահայ երկու նշանաւոր կեդրոններ, Կ. Պոլիս եւ Իզմիր, հողին կը յանձնեն դրական դէմքեր եւ անձնաւորութիւններ:

Իզմիրի մէջ կը մեռնին Մասթէս Մաճուրեան (2 Յունուար), Ստեփան Ոսկանեան (23 Փետրվար), Հայրապետ Սաւալանեան եւ Կարապետ Տէտէեան: Պոլիս՝ հողին կու սայ Տիկին Սրբուհի Տիւսար փաշա (3 Յունուար) Կարապետ Ոսկեան (12 Յունիս):

Բնական տեղատուութեան այս անխուսախիւի հարկին բացած պակասը բացելու համար, նորերու մէջ արտասովոր կամ ինքնաձին հանճարի մը ցոլքը չի նշմարուիր: Արդէն, գրականութիւնը անկուսի շրջանի մը մէջ է, որովհետեւ այն տեղը հարկը զոր գրաչարը կը ներկայացնէ խմբագրին՝ ճանուցանելով՝ սիւնակներու դատարկութիւնը, յաւիտենական սպանալիք մըն է գրականութեան համար, զի խմբագիրը պիտի ստիպէ շատ անգամ՝ զամբիղին դիմում ընելու եւ անկէ քաշել հանելու ինչ որ կը պակսի իրեն այդ սիւնակները լեցնելու համար: Եւ «զամբիղային յօդուած» ին ստորագրողը պիտի խարուի կարծելով թէ իր գրածը իրապէս արժանի է հրատարակութեան եւ իր այդ սպարդիւն եւ անօգուտ ձգտումին մէջ պիտի յարստուէ, առաջ բերելու համար կարգ մը

տգեղութիւններ որոնց ստուարաթիւ գան-
դուածը տեսնել այնքան վարժուեցանք արդէն

Ս. ԱՆԳԵՂԵԱՍ

ԿԻՆԻԿԻԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԸ ՀԱՃԸՆԻ ՄԷՋ

Չեմ գիտեր թէ հոգիս ո՛ր անձանօթ
ակերէն կը բղխին կը յորդին այն զգացում-
ները որքէնի, որ իմ երջանիկ կարծուած
սասուեր կեանքիս յիշատակաց սակի օղակները
կը հիւսեն, ու չեմ կրնար մոռնալ զանոնք :
Մանկական յուշքեր ու անուշակ տպաւորու-
թիւններ ալ կան, որ չեն մոռցուիր ոչ ժա-
մանակի եւ ոչ ալ տարիքի փոփոխմամբ : մեր
ճերմակ մտքերն իսկ չեն կրնար այլափոխել
անոնց իսկութիւնն ու անբծութիւնը : մեր
որտերուն էն թաքուն ալքերուն մէջ պահ-
ուած ու դրոշմուած են անոնք, որոնց վեր-
ջիշումը երբեմն կարծես ապրիլ կուտայ քեզ
մանկութեանդ այն կեանքը անմեղունակ,
սրուն վճիռ վտակը գուցէ դեռ չէր պղտոր-
ուած անձանօթ վշտի մը արցունքի կաթիլ-
ներով :

1884 թուականին Սիւէն փոխադրուած էր
մեր վարժարանը Հաճընի Ս. Յակոբայ վանքը
իբր ամառանոց : բայց ըսե՛մ թէ ո՛ւր է Հա-
ճինը : Ճիշդ Սոսոյ հիւսիսակողմը տարածուող
լեռնալիքներուն ծոցիկը պահուրդած է ան-
զինքը գտնելու համար մազլեկու չափ վեր-
ելքի առժամօք յանձն առնելու եւ դէպի
Քիրազ Տաղիի ցից ու դերբուկ բարձունքը,
ու ապա անոր վայրէջքը : Ե՛ր, ահագին դա-
րուանդներ, դիտու պտոյտ ու սրտիդ սոս-
կում ազդող զառիթափներ ցոյց կուտան,
բայց ստիպուած ես իջնել մինչեւ այն գե-
տափունքը, որ օձապտոյտ գալարումներով
կալի ճիշեր կը հանէ նեղ ու ժեռուա կիր-
ճերէ անցած պահուն : հարկադրուած ես քա-
ուասուն անգամ անցնիլ իր վրայէն, վասն զի
ինքն ալ այդչափ անգամ կը դիմաւորէ քեզ
հոգիդ քաղելու աստիճան մանուած ապտտ ու

դարձդարձիկ չըջաններով : Հաճընցիք Գրբոյ
կէջիտ անուսով մկրտած են զայն :

Բայց սակայն ճամբագ նոյնը չմտար, տե-
տարաններու պէսպիսութիւնները, տեղ տեղ
հսկայ կաղնիներու անտառները, ու Լիրա-
նանը յիշեցնող բարձրուղէչ մայրիները՝
չուտ մտցնել կուտան Քիրազ Տաղիի եւ Գրբոյ
կէջիտի ելքն ու անցքը : Իսկ իւրաքանչիւր
քայլափոխիդ դուրս ցոյցատղ ստանորակ աղ-
բիւրներ՝ կը զովացնեն կը յաղեցնեն չրթնե-
րուց պապակն ու սրտիդ փափաքը :

Տասնութը ժամէն արդէն հասած կրլլաւ
Սիլլի Քօրին օտիկը, որ սեւ ու սե՛պ ժայռ
սըն է միակտուր, ուսկից Հաճըն քաղաքը
ցոյց կուտայ ինքզինքը եռանկիւնաձեւ սա-
րահարթի մը վրայ՝ սանդղակաձեւ տուններով,
որոնք կարծես իրարու կրթնած են եւ ուսնք
ալ իյնալու աստիճան՝ ցցուն ժայռերու զա-
ռիթափներուն կառչած կը մնան :

Ս. Յակոբայ վանքը՝ քաղքին հանդիպա-
կաց լերան լանջքին վրայ կերեւայ պարտէզ-
ներով ու այգիներով եզերուած : իսկ լերան
արեւմտեան կատարին վրայ խուժր խուժր
մայրի ծառեր հորիզոնը կը չըջագծեն :

Մայիս ամսուն եկած էինք հոս, աշնան
կրկին Սիս վերադառնալու : բայց Մկրտիչ
կաթողիկոսը չե՛մ գիտեր ի՛նչ հաշիւով մինչեւ
Ծնունդ յետաձգել տուաւ մեր դարձը, որով
Նարեկիզի ծանօթ բռնի ամուսնութեան գոր-
ծողութիւններուն (զորս այդ թուականին
հրատարակեց Արեւելքի) ալ սկանառես ըլլա-
լու դժբաղդութիւնը ունեցանք :

Ծնունդի շրագաւըցին իրիկունը՝ Հաճընէն
ուխտաւորներ եկած էին վանքը : մեզի իբր
դատարան եւ ննջասենեակ յատկացուած խու-
ցերն ալ առին մեր ձեռքէն : չե՛մ յիշեր թէ
ինչպէ՛ս անցուցինք այդ գիշերը, եւ արդէն
ո՞վ կրնար քնանալ ուխտաւորներու հոգե-
զուարթ ետուզեութեան մէջ, որոնցմէ ոմանց
սիրտը հաւատաքով եւ ոմանց ալ զլուրը դի-
նիով տաքցած՝ կերզէին Յիսուս մանկան
Ծննդեան Աւետար : մինչեւ կէս գիշեր քաղքի
փողոցներուն մէջն ալ կը լուեր « Աւետի՛ս »
ճըվացող լաճերու միօրինակ յանկերզը, հա-
կառակ բքստ ձիւնին ու կճուլ ցուրտին :

Հաստարուն փարախ ծառէն կախուած

վանքին զանգակը յանկարծ հնչեց, որուն առաջին բարձրանին հետեւեցան Հաճընի երեք եկեղեցիներու երկաթէ ու աախտակէ կոշնակները. ո՛հ, ինչ ոգեւորութիւն հաւատով լցուած ջերմիկ սրտերու եւ հոգիներու մէջ. լեռներ կ'արձագանգեն խորհրդաւոր ձայնով մը՝ շեշտելով նոյն գիշերուան խորհուրդին մեծութիւնը անձառելի:

Պատարագիչ եպիսկոպոսը՝ վանքին պատկառելի ծերունագարդ վանահայրն էր, Պետրոս եպիսկոպոս Մելքոնեան: Քաղքին էն անուշ ձեւն ունեցող ձայնաւորները հոն վազեր եկեր էին. եկեղեցին լիքն էր ախտաւորներով, ուր հարսներն ու ազնւակներն ալ իրենց մամիկներուն հետ կ'երեւնային դաւթին մէջ իրարու վրայ թխտուած, ցուցարեղով միանգամայն իրենց տեղական գունագեղ տարազներու այլազանութիւնները:

Պատարագի արդէն սկսուած՝ թափօրի շարքը կը կազմուէր. բայց անդին ուրիշ ուշագրաւ տեսարան մը կը պարզուի. պատարագիչ Սրբազանին առջեւէն կը շարունակէ զոյգ զոյգ տասներկու հովիւներ՝ շապիկներ հագած ու իրենց հովուական սրինգները ձեռքերն ին հրեշտակային եղանակով մը կը սկսին երգել «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» երգը, դուրսը վանքին բակին մէջ բերուած ոչխարներն ալ իրենց անուշ մայանքը կը խառնէին սրինգներու սրտայոյզ ու հոգեզմայլ ձայնին. իր գեղեկական պարզութեանը մէջ՝ վսեմ ու հիանալի էր այս տեսարանը. եպիսկոպոսը կուլար իր հոգեւոր ուրախութեան յուզումէն, իսկ ինձի այնպէս կը թուէր թէ ճիշդ Յիսուս մանկան ծնած՝ քարայրին մօտիկն էի, ուր հովիւներու հետ՝ երկնային անտես հոգիները մեծ խորհուրդը կերպէին Աստուած սրբւոյն ծննդեան:

Ու ամէն տարի, երբ Ս. Մննդեան տօնը կը տօնուի, յանկարծ աչքիս ու մտքիս առջեւ կուգան կը պատկերանան՝ Հաճընի Ս. Յակոբայ վանքը, ծերունի վանահայրը, ու հոգիիս խորքն ալ դեռ կարծես կ'արձագանգուի՝ «Խորհուրդ մեծ» երգող գեղջուկ հովիւներու սրինգներուն մեղանուշ ձայնը՝ իրենց ոչխարներուն անուշակ մայանքին հետ:

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ



ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ

Ծ.

ՏՂՈՒՆ ՏԵՍՈՂՈՒԹԻՒՆԸ

Դաստիարակութիւնը այն մշակութիւնն է զոր ամէն սերունդ յատկապէս կուտայ իր յաջորդներուն, որպէս զի կարող ըլլան գոնէ պահելու և երէկ կարելի է՝ անեցրելու ամէն տեսակ զարգացումները և յառաջդիմութիւնները որոնք մինչև իրենց ժամանակը իրագործուած են:

ՃՕՆ ՍԹԻԼԸՐԹ ՄԻԼԼ

Մանկան տեսողութիւնը անոր զգացողութեան եւ ըմբռնումին հետ յարաբերութիւն ունի պարզապէս. «Այդ կէտէն, կ'ըսէ Պ. Կապրիէլ Գօնրէլը, կը մանկեք մտաւորական կեանքի աստարտէզին եւ մաքի ակար սկիզբներու պատմութեան մէջ»: — Մանուկը կէս կոյր կը նկատուի եւ տեսողութեան զգայարանքը որ կ'արեւորագոյնն է մարդուն համար, տակաւ առ տակաւ կը զարգանայ՝ ինչպէս ամէն գործարանները միեւնոյն համեմատութեամբ կը զարգանան: Տղան տեսնել կը սորվի, ինչպէս վերջը քաղի, լսել եւ խօսիլ պիտի սորվի — «Առաջին երեք ամիսներու մէջ, ըսած է Քանթ, աղաքները կազմակերպուած տեսողութիւն մը չունին: Լոյսի զգացողութիւնը ունին թէեւ, բայց առարկաները իրարմէ չեն կրնար տարբերել: Այդ մասին դիւրին է համոզուել մը կազմել փայլուն առարկայ մը ցոյց տալով անոնց. աչքով չեն հետեւիր անոր»: Հետեւաբար աղան որուն աչքերը ուժգին ըլլալէն կը շլանան, չկրնար առարկաները որոշել, զանազանել: Պոէսրինաս դիտած է որ նորածնները չափազանց ըլլալէն վախմաշուն պատճառով է որ ցերեկին իրենց աչքերը դէպ ի ըյս չեն բանար, այլ կը նախընտրեն իրիկունները բանալ: — «Պ. Բրէեէր որ աղան ծննդենէն հինգ վայրկեան վերջը դիտողութիւնները սկսած էր անոր վրայ՝ արշալոյսին տարած էր իր աղան դէպ ի պատուհանը, դիտելու համար ըյսին ազդեցութիւնը իր աղան վրայ եւ ստուգած էր որ սկիզբը նորածինը ճշը

մարիտ համակրութիւն մը ունէր լոյսին դէմ»
 Դիտած են նաեւ որ առաջին օրերը տղան
 երբ թարթիչները լոյսին կը բանայ՝ անմիջա-
 պէս աչքը կը գոցէ՝ լոյսը անտանելի գանե-
 լով : Ընդհանրապէս ծննդեանէն քանի մը օր
 վերջը տղուն տեսողութիւնը կը զօրանայ ,
 խաւարը շտրկեր բնաւ եւ լոյսը կը փնտռէ իր
 սիրուն աչքերովը : Քանի մը շարժւած վերջը
 լուսավառ առարկաներ կը փնտռէ , կը սրէ ,
 ինչպէս շատեր դիտած են որ բոցավառ կրա-
 կըն ալ իրեն համար այնչափ հրապուրիչ է
 որ ձեռքը դէպի հոն կ'երկարէ առանց գիտ-
 նալու սակայն որ այդ կրակը , չարակամ
 քննադատութեան պէս , մատերը կրնայ այ-
 բել , բայց չը լուսաւորեր երբեք : Աստիկ
 վերջը կը սկսի ցերեկը արեգական եւ գիշերը
 ճրագին լոյսովը լուսաւորուած սոկեցած կամ
 գոյնզգոյն առարկաները հաճութեամբ դիտե-
 լու , բայց հաւաքուած եւ կեդրոնացած լոյ-
 սը որ մերձակայ է տղուն՝ դարձեալ անհա-
 ճոյ է անոր աչքերուն . թարթիչները կը գո-
 ցէ մինչեւ որ զօրանան եւ ուժգին լոյսին
 սովորելով՝ չչանան այլեւս :

Առաջին օրերը տղան աջ ու ձախ կողմե-
 րը չնայիր : Արդէն աչքերուն գունտերը
 ազատ չեն դառնար եւ մանտանդ գլուխը
 չկրնար շարժել : — Ատոր համար , երբ ճրագի
 մը վրայ ուղղակի կը նայի՝ չէ կորուզ հետե-
 յիլ այն ճրագին , երբ աջ կամ ձախ կողմը
 իրմէ քիչ մը հեռի կը տարուի : Այդ մասին
 նկատողութեան անուամբ է նաեւ որ ման-
 կային աչքերու պարուրակին (rétime) ակա-
 րութիւնն ալ ուղղակի նայելու պատճառնե-
 րէն մէկն է : Հետեւաբար հոս ալ տղան
 կարծես թէ ինքնազանգանութեան բնագ-
 դով կը գործէ :

Պ. Քոնրէյրէ հետեւեալ դիտողութիւնն ալ
 ըրած է . — «Ուրիշ կէտ մը կայ որ ոչ նուազ
 անուրանալի է , այն է թէ տեսողութիւնը
 նախ հեռի չերթար : Դրէք վաստած մտ
 մը ասանրհինգ-քսան օրուան տղայէ մը եր-
 կու կամ երեք մէթր հեռաւորութեամբ .
 աչքերը անոր վրայ յառած պիտի նայի : Եթէ
 այդ մտը երեք , չորս կամ հինգ մէթրոյի
 չափ հեռացընէք՝ ակներեւ պիտի նշմարէք
 որ տղան նայուածքը կը դարձնէ այդ լոյսէն

եւ իր անորոշ նայուածքին մէջ պիտի տես-
 նէք որ ա՛լ բան մը չնկատեր եւ չըմբռնէր : »
 Հոս ալ յատկաբար նկատուած զարգացում մը կայ
 եւ դժուար է ըսել թէ ստուգիւ ո՛ր ատեն
 տղան տեսողութեան կանոնաւոր կարողու-
 թիւնը կը ստանայ : Պ. Քիննէ կը կարծէ որ
 երկուք ու կէս ամսուան տղան յիսուն ասն-
 քիմէթր , այսինքն կէս մէթրոյէ անդին բան
 մը չկրնար տեսնել : Պ. Քրէկէր դիտած է
 որ մէկ տարեկան տղան հարիւր սաք հեռա-
 ւորութեամբ գալով մարդիկ կրցած էր նշմա-
 րել : Իմ մասին դիտած եմ որ տանընթիւ
 ամսուան մէկ տղաս գրեթէ հարիւր կանգուն
 հեռաւորութեամբ ոչ միայն տեսած , այլ
 ճանչցած էր զիս եւ այդ կէտէն որչափ տը-
 դուն կը մտնենայի՝ այնչափ որոշ կը նշմարէի
 անոր ժպտիլը : —

Բայց , ինչպէս շատ ճշդիւ դիտած է Պ.
 Քոնրէյրէ , այս հակասութիւնները գուցէ
 առաջ եկած ըլլան տեսողութեան առարկայ
 եղած իրերու տարբերութենէն . առաջին
 պարագային մէջ՝ մտի մը լոյսը եւ երկրոր-
 դին մէջ պարզապէս լուսաւորուած առարկայ
 մը , մարդու մը դէմքը . — «Ինչ որ ըլլայ ,
 կը յաւելու միեւնոյն հեղինակը , պէտք չէ
 մտնալ որ տեսողութեան դաստիարակու-
 թեան , ինչպէս ամէն պարագաներու մէջ ,
 առողջութեան եւ ոյժի բնական անհատաս-
 րութիւնները կրնան յատկացրնել կամ յե-
 տաճգել գործարաններու եւ անոնց գործու-
 ղութեան կատարեալ զարգացման թուականը .
 ապացուցուած է որ յարմարումը , պատշա-
 ճումը (adaptation , accomodation) որ թոյլ
 կուտան աչքերու աւելի հեռաւոր միջոցներ
 տեսնելու , տակաւ առ տակաւ եւ յառաջ-
 դիմաբար կը կազմակերպուին : Ամէն նորա-
 ծին առժամանակեայ կարճատես մըն է :
 Արտաքին բնութեան պատկերը , իր ամէն
 յատակագիծներով , խորութիւններովը չպար-
 զուիր նախապէս եւ յանկարծ տղուն զար-
 մացող եւ հրապուրուած աչքերուն առջեւ :
 Չմտնել աշխարհ , ինչպէս կը մտնենք թառ-
 րոն , արդէն՝ պատրաստուած տեսարանի մը ,
 գործի մը առջեւ եւ զոր հանդիսատեսը աչ-
 քի առջեւ կը բերէ մասմիտի , այլ մաս առ
 մաս , հատուած առ հատուած է որ տեսա-

նելի իրերու աշխարհը իր աչքերուն կ'երեւայ եւ զանոնք ծածկող վարագոյրը կը խղճուի ու կը բացուի :

Յառաջիկային քիչ մըն ալ պիտի խօսինք մարդկային մկանունքներու ոյժին եւ այդ ոյժին աճման վրայ որ կը թոյլատրէ աչքի դունտին շարժելու եւ դիրքը փոխելու որոշ սահմաններու մէջ , ինչպէս անոնց վրայ որոնցմով նոյն խակ գլուխը կը շարժի, եւ պիտի դիմենք հարկու ձեռնհաս հեղինակներու գիտական բացատրութեանց :

Իզմիր

Գ. ՊՈՒՊԼԻ

ԱՅԽԱՐՀԻ ԹՐՋԱՆԸ

ՇՐՋԻԿԻ ՆՕԹԵՐ

(Փ.)

19 Դեկտ., Կապիարտ

Սքանախաւային մինչեւ կովկաս ու կովկասէն մինչեւ Գանգէսի ափունքները այս սրարշաւ փախուստէն ետքը, — մեծածաւալ աշխարհի մը մէկ ծայրէն մինչեւ միւսը, կատարելագէտ, — նորէն Հնդկաստանի մէջ, ա՛, զարմացուց ձեզ ասիկա, արդեօք : Սակայն ո՛վ իմ ինձմէ հետեւ սիրականներս, որ կը հետաքրքրուիք եղբր Հայ Սթէնդիսի ո՛վ ըլլալէն, — ինչպէս խորհրդաւոր յայտնութիւն մը աւանջա կը դէն այդ գաղանիքը. «Հնդկաց Աշխարհի մինչեւ անդի ծայրը, — զարմանալու ի՞նչ կայ հոս :

Բնութեան ծոցը, ամէն կողմ, հոս հոն ցանցնուած սեղեր կան, ուրիշ, երբ մարդ անգամ մը իյնայ հոն, չուզեր բաժնուիլ, անոր սարքած զմայելի հմայքներէն գինովցած : Զուլալ ու կարկաչուն ասուակի մը եզերքը շարուած լացող ուսնիներու հովանի մը, շատ անգամ արուեստական պչրանքներով շտկուած սաղարթափա պարտէզէ մը աւելի կարժէ : Բնութիւնը իր վայրի ճաշակներովը, անանկ ազուսրութիւններ գլխէ յորինել, որուն հետ մարդուն կարճ խելքին բանագրօսիկ ճիգերը երբեք չեն կրնար մրցիլ :

Իրախօսի մանրանկար աշխարհ մըն է

Հնդկաստանը, իր ամբողջ վայրի դեղեցկութիւններովը, որուն տեսքը քաղց, զգլխիչ ու հրապուրող բան մը ունի : Ա՛հ, իր դաւաբաւէտ կանանչ լեռները, ուր հասարակածի կայտառ հօտերը կարածին եւ ուր երկինքը ու ծովերը հրաշալի ազուսրութիւններ կը հագնին, փառաշուք Արշալոյսին վառվառն նարտաները քսելով իրենց դէմքին, մթազօր Ակնիին սոկեման ճառագայթներուն տակ : Ու հոն բովանդակ բնութիւնը գինովցնող զիւթութիւններու զուարթ պչրանք մը կառնէ, մեզր-հեշտանք մը ծորելով պայծառ երկինքներն ի վար :

Գծագրիչներուն ճարտարութեանէ՞ն, չեմ գրտեր, քարտէսին վրայ, երկիրներու բաժանումները, իրենց գոյնով, գետերու ցանցով, ու լեռներու օղակներով, գրեթէ բան մը կը մտանեն իրենց իրական յատկութենէն, ազուսր կամ անհրապոյր :

Ընդարձակ Սիպերիայի երեսէն, սարսուռ մը կանցնի կարծես, չոր քարտէսին վրայ, ու ամբողջ Չինաստանը, իր դեփ դեղին, չոր տարածութիւնովը, պող-զուռակ, դեղունած աղու մը կերպարանքը, ունի : Կան երակիրներ ալ, որոնք արդէն մէյմէկ ազուսր դրախտ են, քարտէսին չոր թուղթին վրայ անգամ : Զուիցերիան դիտելով, պտուտքող կապոյտ գետերու հիանալի դեղեցկութիւնը չէ՞ք զգար :

Հնդկաստանը անոնցմէ է : Քարտէսին ցոյց տուած գեղեցկութիւնները չեն բաւեր, գաղափարը տալու համար այն աննման աղւարութիւններուն, որոնցմով օժտուած է հսկայ Հիմալայաներուն պահպանած այս երակիրը, զոր Գանգէսի նուիրական ու պարգեւատու ջուրերը կտոցեն :

Ինչին մարդոց երկիրը անցնելէ առաջ, հոս քիչ մըն ալ մնալու թափառայած անուպատա կաններու այս երկրին թանկագին գեղեցկութիւնները քիչ մըն ալ վայելելու համար, վիզերը կիյնայի Արեւծագի Երգերու բանաստեղծին, վեհագի ուղեկցիս, լեռներու հովիտներու այս չքնաղ տղուն :

Մէկու մը պէս, որ հեշտալի վայելքներու մէջ խղճուելէն, ա՛լ համ շառներ անոնցմէ, չարածձի ու հեզնող խնդուքով մը, կը

ծաղրէր երիտասարդի այդ դիւրարորութք յա-
 փըջտակութիւններս, բան մը չհասկնալով այն
 բոլոր խանդավառ փափաքներէս, սրանք
 իրեն համար սովորական բաներ դարձած
 էին ալ : Իր խելքով, ինչ կարժէր, օրինա-
 կի համար, Ֆաբրիներու կեանքին ուսում-
 նասիրութեան հետապնդումս, կամ պրահ-
 մանական ազանգուորներու կրօնական վա-
 նազան արարողութիւններուն վրայ ունեցած
 բուն հետաքրքրութիւնս : Ու հիմա որ, ա՛լ
 այդ խորհրդաւոր տեսարաններուն կուշտ
 հանդիսատեսութիւնովը կը ցնծայի, հետունց
 հետու, շեղակի մտածումով մը, երջանիկ կը
 սեպէի ինքզինքս մեր խորհրդապաշտ եզա-
 կան բանաստեղծ Եղիա Տէմիրճիպաշեանէն,
 որ հնդկի գրականութեան ու Պուտայի
 կեանքին հրաշալի միսթիքութիւններովը յա-
 փըջտակուած, ամբողջ խորհրդապաշտ քնա-
 րերգութեան մը լարր հնչեցուց մեր գրակա-
 նութեան մէջ, ապրելով կատարեալ Ֆաբրի
 կեանք մը, եւ չի կրցաւ արժանանալ տես-
 նելու այն երկիրը, որուն ծաղկեցուցած զիւ-
 թական խորհրդապաշտութիւններովը հմայուած
 ու գինովցած էր :

Այս մտածումներուն տակ, խենդ յափը-
 տակութիւնով մը, անհամբեր, Բաբպի կը
 պատմէի այս պարագան, որ աղուոր յայտ-
 նութեան մը պատճառ եղաւ ինծի :

Պատմելէ ետքը կեանքը մեր պուտտա-
 յամու գրապէտին, երբ կաւարտէի խօսքս
 իր կարծիքը հարցնելու այս եղելութեան
 վրայ, ան՝ մաքին մէջ բան մը փնտտելու
 պէս, կաշխատէր ամիսիեւ յիշողութիւնը,
 անակնկալ մը ընելու յայտնի ձեւերով :

— Բայց, — կարեց խօսքս վերջապէս, —
 ես կը ճանչնամ զինքը, պատկերն ալ տեսած
 եմ, ժողովով ու աղուոր զէմքով մարդ մը
 չէ՞, կարծեմ անունն ալ սանկ բան մը, Տէ-
 միրճիպաշեան :

— չէ՞, — կուզուէի երեսն ի վեր, զօր-
 մացական շեշտով մը, — ինչպէս կրնաս
 ճանչնալ, գիրքերու մակ, ս'ը հանդիպած է
 արդեօք իրեն, հէ . . . :

Չոր ու ոսկրուտ կզակը բռնելով, կոնս-
 կի վրայ լայն մը ճողելէն, կուշտ քահքահ
 մը կարճակէ, ծռելով, շտիուելով :

Անհամբեր հարցումներուս վրայ, կը պատ-
 մէ թէ, Կալիսթացի հայ մը, հոն հրատա-
 րակուց անգլիական թերթի մը մէջ, ուսում-
 նասիրութիւն մը հրատարակած է մեր Եղիա-
 յին վրայ, իբր պուտտայագուան հայ գրա-
 գէտ մը : Յուցնելու էին իրեն, այդ յօդուա-
 ծը, իր պատկերովը զարդարուած, որչա՛փ
 պիտի ուրախանար արդեօք :

Կալիսթա ըսի, միաքս ինկու :

Կը հետաքրքրուէք Հնդկաստանի այդ
 չքնաղ մայրաքաղաքով : Ես, իմ մասիս,
 տարօրինակ գաղափար մը գոյացուցած եմ
 անոր մասին : Չեմ գիտեր ինչու, հարստու-
 թեան, ճոխութեան եւ աղամանդներու խոր-
 հորդանշանը կըսած է ան ինծի համար : Կալ-
 կիսթա՛, ոսկիներուն ձայնը չէ՞ք ըրեր այդ
 արտասանութեան մէջ : Առաջին հայերէն
 թերթը հոս հրատարակուած ըլլալուն, հոս-
 տեղի Հայերուն գրականութիւնը կը հետա-
 քրքրէր զիս, ոսկիներու ձայնէն աւելի եւ
 քիչ մըն ալ անոնց ընկերային վիճակը, ամէն
 տեսակէտներով : Աղուոր կեանք մը ունին
 հոս տեղի Հայերը : Գրեթէ ամէնքն ալ մե-
 ծահարուստ վաճառականներ են, ու ոսկի-
 ներու մէջ կը լողան, աղամանդով կը չոր-
 ցոյնին, — եթէ պիտի ներէիք այլարանական
 բացատրութեանս : Աշխարհարար հայերէնին
 շատ տկար է : Ոսկեղնիկ ընզուէն շատ անուշ
 համ առեր են ասոնք կերեւայ թէ : Թանձր
 գրաբարեաններ են ամէնքն ալ, իրենց մէկ-
 քանի աւետարական նամակները կրցայ ձեռք
 ձգել, ուր Հ. Արսէն Բագրատունի կամ Գա-
 լէմբարեանի մը արժանի գրաբար մը կը կոկ-
 տրիկն անոնք : Բայց, մեղադրանքի մը հա-
 մար չէր որ կուզէի ըսել ասիկա, կը հաս-
 կնաք :

Հոս, շնորհքով Հայու մը ծանօթա-
 ցուց զիս Բաբպա, գրող կարգացող հազ-
 ուազիւտ անձնասրութիւն մը, որուն վրայ,
 իբր գրապէտ, հիանալ միայն կը մնայ :
 Պուտայ գրագէտներուն քովը գտնել չկրցած-
 ներս իր քով իրովին վայելած ըլլալուն, պըզ-
 տիկ ուրախութիւն մըն է որ կը պահեմ սրբ-
 տիս մէջ : Գրական հարցերու վրայ իր հեռ-
 ունեցած մէկ ենդեռվիտուս, պիտի ջանամ, իբր
 ամէնէն թանկագին յուշք մը, նօթի առնել :

այս գիշեր, եթէ իր ճարտար շտղակրատութիւններովը զլուսա չի տանի անաշ լիզուաներով իւրենց որ այս անտակ տղան, որ արգէն, հիմա, քովս, իր նապաստի մը թոտան չփածու թիւններովը արծաթի մը մէջ երկնցոմ, քիթս ի վեր Հազմանայի տերեւ մը ծխացնելով, խեղքս գլուխէս կ'առնէ, վերջացուր գոռալով:

Ուրեմն ահա՛:

ՍԳԷ

Ա՛, ճարտարութիւններու վրայ բան մը չըսի, հէ՛, Ալլահապատէն մինչեւ հոս:

Է՛հ, հոգեբնի՛ց, ի՛նչ պիտի բնէք հողի ու ջուրի այդ ցնդի փնդի նկարագրութիւնները: — Շոգեկառքը կը սուրար, անիւները կը դառնային, ծխնեղջիկն մաւս կ'եղէր: Պարագ բաներ չէ՞ն ասոնք:

ՍԳԷԱԱ

ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻԻՆ



Մասինս հիւրընկալութեան կը յանձնեմ մեկը ժան Կաստօնի այն աս սիրուն ու զուարթասոն գուրիւններէն՝ գոս Գօֆէն եղբայրները իրենց անվիճելի սալանդով ու արուեստով գիտցած են արժեցնել ու հնչակաւոր դարձնել Մենախօսութեան ձեւին սակ: Նիւքը կընդգրկէ մեկը ծնողներու այն ունայնամիտ քերութիւններէն՝ որոնք աշխարհի ամեն կողմը միտ միտնոյն են ամեն ցեղի ու հակառակ բարեբու մէջ: Կը կարծեմ որ անոր ընթերցումը այնքան հանոյալի պիտի ըլլայ, որքան նորանեան ու գրաւիչ բան մը պիտի ըլլաւ երէ մեր արուեստներ երիտասարդներէն մեկը, ելլէր արտասաներ զայն Մարտի մը մէջ, օգտակար զանազանութիւն մը դնելու համար, անոր աս անգամ սին ու վասնող զբօսաններուն մէջ:

Օ. 2. — Ս.

ՌԻՖ . . . ՍԱ ԾՆՈՂՔՆԵՐԸ

(Տեսարանին ներսի կողմը նայելով.) Բարե՛ւ, Տիկին. բարե՛ւ, Պարոն: (Տղա մը

ձայն.) Բարե՛ւ պզտիկ բարեկամս. (Ռեպիկ վրայ առաջանալով.) Գեանին տակը անցնի՛ք սակնքդ ալ: Ո՛ւՖ, սա ծնողքնի՛րը . . . հասցա տղաքնի՛րը. բայց ծնողքնի՛րը մանուշակ . . .

(Հագուսքը դիտելու համար խօսքը ընդհատելով.) Աս հագուստին ա՛լ խերը տես . . . ա՛լ բնաւ պիտի չի կրնամ հագնիլ . . . մանուշակ սա գլխէն անցած բաներէն ետքը . . . Իուք կը սիրէ՞ք ծնողքները . . . զուտիներ ունեցող ծնողքները, որոնք միշտ ցոյց կուտան զանոնք ձեզի, որոնք միշտ խօսեցնել կուտան զանոնք . . . եւ որոնք միշտ կը հիանան անոնց վրայ . . .

Ես, իմ մասին, իրաւ որ չեմ կրնար կոր հանգուրթել անոնց . . . Ասոր հետ մէկտեղ կարծես դիտմամբ կրնեն կոր . . . Ամբողջ կեանքիս մէջ ծնողքներուն խաղաղիկը եւ պէպէքնեան զոհ եղած եմ . . . եւ, հոս նայեցէ՛ք (Հագուսքը ցուցնելով.) ճիշդ քիչ մը առաջ էր որ, սպեցի քողաքավար ըլլալ ծնողքի մը հանդէպ . . . մէկ հատ մը գիրկս ասի . . . ծնողք չի գիտնաք . . . տղեկ մը . . . երկու վայրկեան վերջը հագուստիս գործը լմնցած էր, — նոր ալ չըլլա՛ր գոնէ . . . բայց սա աստուկ է միշտ . . .

(Կարճ դադար մը.) Ամենէն գէշ բանը, խեղցի զուտիներ ունեցող ծնողքներն են, եւ ուշադրութիւն բրէք որ իմ բոլոր ճանչցած ծնողքներս ալ խեղցի զուտիներու տէր են: Եթէ ծնողքները չըլլային՝ մարդ չպիտի նշարէր անոնց խեղցիութիւնը, բայց անոնք կրտսիպեն իրենց տղաքը որ ցոյց տան իրենց խեղցիութիւնը եւ գիտէք թէ որչա՛փ զուարճալի են իրենց խեղցիութիւնը ցոյց տուող տղաքը:

Օրինակի համար, ասէ՛ք սա Քամուլտանները . . . կը ճանչնա՞ք Քամուլտանները . . . արտաքոյ կարգի բան մը չունին . . . Քամուլտա չէ՛ անոնցմէ՛ որոնք . . . բայց ոչ ալ անոնցմէ՛ որոնք . . . կնիկն ալ իրմէն վար չի մնար . . . ասոր հետ մէկտեղ սովորական մարդիկ են . . . կամ էին աւելի ճիշդը, ինչու որ վեց զուտի տէր ըլլանէն ի վեր ա՛լ անհանգուրթելի դարձած են: Վեց հատ զուտակ, ըլլալի՞ք բան է: Իրաւ որ ծագելի բան

է ատիկա : Տան վարձքի համար ալ ահագին զրամ կը վճարեն կոր . . . Ձգէ՛ որ նորէն տուն փոխելու պէտք պիտի ունենան , ինչու որ ամէն տարի . . . հօ՛ւփ , մէյմըն ալ աշխարհ կուգայ կոր . . . Ան տանն , սա նայէ՛ , վեց տարուան մէջ . . . երկվեցեակ մը : Տասու երկու՛ս զաւակ . ապո՛ւշ բան է առ : Լաւ , բայց ամենէն սոսկալին ան էր որ վեց տղաքն ալ խեղացի են , նոյն խի սոնտուին գիրկինը . . . ամենքն ալ պզտիկ հրաշալիք ներ . . . եւ երբ Քամուլաւ հիւր ունենայ , ցոյցի կը գնէ անոնց խեղացիութիւնը : Կեցէ՛ք պատմեմ : Առջի գիշերը անոնց էի գացած . գիտնայի՞ք ինչ քաջեցի այդ հրեշտակիկներուն ձեռքէն :

Երեւոյսեցէ՛ք որ Քամուլաւ իր բոլոր ժամանակը կ'անցընէ , անոնց՝ իր ընտանիքին անդամներուն ձեռքը կեղծել սորվեցնելով : Ա՛ն քեզի դատարարութեան նոր ձեռքն ալ : (Քամուլաւին ձեռք կեղծելով .) — Մենք հայրի՞կը ինտոր կընէ : (Տղու մը նմանութիւնը կընէ որ հագացող ծերունիի մը ձեռքը կը կեղծէ .)

Մայրի՞կը ինտոր կընէ : Ատալ՛ի հօրեղբայրը ինտոր կընէ : Ըրէ՛ նայիմ , ինտոր կընէ , Ատալ՛ի հօրեղբայրը : Ըրէ՛ տեսնամ , առջի օրը այնչափ աղւոր ըլլիր նէ : Ձե՛ս ուզեր կոր ընել . . . Ա՛լ պարտալ բան է , երբոր չուզէ ընել , չընէր . անկարելի է խօսքէն ետ դարձնել : Օ՛հ , ան ալ իրեն յատուկ պըզտիկ կամքի մը տէր է :

Այն տանն պզտիկ տղան կը կանչեն : Ադ ալ կենդանիներուն ձայները նմանցնելու մասնագէտ է :

— Բազը ինտոր կընէ : Ծո՛ւնը : Հապա կատու՛ն : Կո՛վը ինտոր կընէ , կովը : Ա.քաղա՞ղը :

Ամբողջ հաւնոցը ու ատուր պարպուեցաւ . . . ոչ իսկ . . . ր դուրս մնաց բաղդէս . . . Այս՛ , այս՛ , . . . սա տղան ամեն լեզուէ պիտի հասկնայ :

Քամուլաւ ինքիրմէն ելած էր ալ : Վրայ տուա որ երբորք զաւակն ալ գոց առակ մը զուրցէ անպատճառ : Ա՛խ , առակն ալ . . . ուրի՛շ տանջանք : (Նորէն իր հագուստին գաղով .) Եզովի՛ց

արմատ , ի՛նչ գէշ բան եղաւ ատիկա . . . եկո՛ւ տես որ ես ալ ճիշդ այսօր քանի մը այցելութիւններ ունէի ընելիք . . . բայց կրնայ ըլլալ որ պենդինով կ'ելլէ . . .

Գոց ստակ զարցոյլ աղցմէն կախորժի՞ք գուք . . . Օ՛հ , կենդանիներուն ձայները առելի աղէկ են ինծի համար . . . առելի կարճ կը բշէ : Եթէ աղէկ բան մը կայ՝ ան ալ սա է որ պզտիկ Քամուլաւը շատ նազըրու : Բայց վերջապէս հաւանեցաւ , եւ քիթին մէջէն ձայնով մը , միմտաց ձգուսին սուսկը :

Հայրիկը , մայրիկը , Ատալ՛ի հօրեղբայրը , ամենքն ալ մեծ ցնծութեան մէջ էին :

Հօրեղբայրը ուզեց որ Յովսէփ Գեղեցիկին պատմութիւնը ընէ : Բարեբաղդարար մտոցեր էր եղեր ան իրիկունը :

Գաւազանն , զյիսարիս տալի եւ ինժուէնցայի սկզբնատարութիւն մը պատարակելով , կծիկը դրի :

Բայց տանք դեռ բան մը չեն . ծնողներուն ինչ ըլլալը աղէկ հասկնալու համար , — երկաթուղիով ճամբորդելու է եւ երկար բարակ ճամբորդելու է . . . եւ եթէ կարելի է՝ գիշերով ճամբորդելու է :

Ըսենք որ գիշերուան տանին ճամբայ եւ ելած . առտուան ժամը երկուքն է եւ դեռ հագի՛ւ կը պարպուի քու նստած քօմբառովմանդ : Բաւնը՝ որուն այնքան պարտալ տեղը սպասեցիր , կըստի գալ , նստարաններուն վրայ հանգիստ մը կը տարածուիս , ներքին գոհունակութիւնով մը , ինքնիրենդ զրուցելով . — Ասկէց ետքը ա՛լ մարդ չիգար :

Կառախուսմը ճամբայ կիցնայ նորէն . . . Մէյ մըն ալ , պզտիկ կայարանի մը մէջ կը լսես դուսին բացուիլը , եւ ձայն մը որ կը պօսայ . — Հոս հրամէկցէ՛ք , բարեկամ՛ , հոս տե՛ղ կայ : — Եւ կը տեսնես որ ետեւէ ետեւ կը շարունակեն կնիկը , կրիկը , եւ մէ՛կ , երկուք , երեք , եւ երբեմն չորս տղեկներ , զորս երկաթուղիի Ընկերութիւնները , ամուրի՛ ճամբորդներու հանդէպ մասնատու ու նրբամիտքի անգլթութիւնով մը , ձրի՛ կը տեղափոխեն :

Կառախուսմը ճամբայ կիցնայ նորէն , եւ կը փորձես նորէն քնանալ . . . Աս՛ . չիտակը :

Տղայք մէկը կրօնիս պարտիւ ասքիդ
մասնհրաւն վրայ :

Հայրը , ձայնով մը որ քնացած խաչերը
անդամ թունդ կրնայ հանել , կը պօռայ ժօ-
զէՖ , հո՛ս եկու , Պարանք արթնցնե՛ս պիտի
հիւայ : — Եւ որովհետեւ ժօզէՖ կը շարու-
նակէ սաքերուդ վրայ երթե եկել , թեթեւ
շարժում մը կրնես : Այդ պզտիկ նշանը կը
բառէ որ ժօզէՖ յաղթական կերպով գոչէ . —
Հայրի՛կ , չի քնանա՛ր կար եղեր :

— Լուս կեցի՛ր ապա թէ ոչ կը ծեծեմ՛ ,
քեզի կը պօռայ հայրը :

Մ՛հ , այն ատեն ահարկու խմբերդ մըն է
կը սկսի : ժօզէՖ եւ բոլոր իր եղբայրները
որանք իրարու թեր ելլալու սովորութիւնը ու-
նին , սիրամարզի ճշիւններ կ'արձակեն նախ
որպէսզի ժօզէՖ ծեծ չուտէ , եւ յետոյ անոր
համար որ ժօզէՖ ծեծ կերաւ :

Եւ երբ կը աննես որ հայրը կըստանայ
բովանդակ ընտանիքը ծեծել , անմիջապէս մէջ
կը նետուիս , եւ . . . — ա՛տ էր պակաս , — նե-
րողութիւն կը խնդրես երեք բզէզներուն հա-
մար , որանք ճամբորդութեանդ շնորհիւ գըլ-
խուցաւ մը եւ սաքերու թմբութիւն մը
վասակցուցին քեզի :

Վերջապէս , սաքով , ձիու վրայ , կառքի
մէջ կամ երկաթուղիով շեմ կրնար քայլ մը
առնել , ատանց ուրիշներուն լաճերուն հան-
դիպելու : Կեանք չէ , շարշարանք է աս :
Ուստի պէտք է որ ես ալ որոշումս առնեմ :
Կարգուիմ պիտի , չէ թէ պատշաճութեան
կամ պէտքի մը համար , հապա վրէժխնդրու-
թեան համար . . . Ա՛յ կը բաւէ որչափ որ
ծնողքները ձանձրացուցին զեա՛ս ալ ծնող պի-
տի ըլլամ . . . եւ կարելի եղածին շափ շատ . . .
եւ իմ բոլոր զաւակներս ալ խելացի պիտի ըլ-
լան . . . պիտի ստիպեմ որ խելացի ըլլան . . .
կենդանիներու ձայներ պիտի նմանցնեն ,
իրենց հօրեղբորը ձեւերը պիտի կեղծեն ,
առականք պիտի զօրցեն գոյ , նոյն իսկ մե-
նախօսութիւններ պիտի արտասանեն եւ . . .
զարմանալին հոն է որ , ես ալ սքանչանա՛մ
պիտի ստանց վրայ :

«ՄԱՍԻՍ»-Ի ԵՄԱՍԻՍԻՐՈՒԹԻՒՆՆԸ ԻՐ
ՇՆՈՒԿԱԿԱՐՔԻՆԸ կը յայտնէ՛ Ս.Մանուկ
առքի քէ Կ. Պոլսոյ մէջ եւ քէ՛ մօտակոյ
գաւառներէն ստացած շնորհաւորական ու
բարեմատրական հաղթերուն եւ նամակնե-
րուն համար , որոնք ամէնքն ալ քերթիք յա-
ջողութիւնը իրենց տեսակէս ունին : Եւ այս
առքի , երջանիկ օտրի մը կը մտադրէ ու սի-
րալիք շնորհաւորութիւններ կ'ուղղէ իր բո-
լոր ընկերացիներուն , աօխասակիցներուն
եւ գործակալներուն :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Կաղանդի առևուճ Ս. Պատրիարք Հայրը
նախագահեց Մայր եկեղեցոյ արարողու-
թեանց , եւ յետոյ՝ Պատրիարքարանի գահ-
լիճին մէջ : — որուն պատերը ծածկուած
էին հին Պատրիարքներու պատկերներով
որոնց հաւաքածուն կազմած է Ն. Սրբազ-
նութիւնը , — քնդուենց Թաղ. Խորհուրդնե-
րու , Պատրիարքարանի պաշտօնէութեան ,
եկեղեցականներու եւ աշխարհականներու
շնորհաւորութիւնները , եւ աւանդական սո-
վորութեան համաձայն Օրացոյցներ նուիրեց
բոլոր այցելուներուն :

Ս.Մանուկ առթիւ , Ս. Պատրիարք Հօր
շնորհաւորական այցելութիւն տուաւ նաեւ
Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոս Երէջեան Սրբ-
բազան :

Շնորհաւորական այցետուներ զրկած էին՝
Բարձր. Մեծ-Եղբարքաւոր , խորհրդականը՝
Թէվֆիզ Ժաշա եւ պետական ուրիշ բարձ-
րաստիճան անձնաւորութիւններ :

Երուսաղեմստան մէջ Երէջեան Սրբա-
զան , Ս.Մանուկ առթիւ ընդունեց բազմաթիւ
եկեղեցականներու եւ աշխարհականներու ինչ-
պէս նաեւ Պատրիարքարանի պաշտօնէութեան
շնորհաւորութիւնները :

Աղբասախնամ մարտիկները , Գում-գարու ,
Բերա , Սկիւտար , Օրթաղիւզ , Սամաթիա եւ
ուրիշ թաղերու մէջ , Կաղանդի առթիւ անձ-
նուէր հոանդով նպատակ հաւաքած եւ կա-
թանալներու բաշխած են : Գում-գարուի շորս

միացեալ թաղերու Ազգատարինամին հանգա-
նակութեան գումարը կը հասնի 5000 զրջ. ի :

Պատրիարքական շրջաբերական մը ուղ-
ղակեցաւ, նոր տարիի սկիզբը, սենեւոր եւ
բարեսէր ազգայիններու : Այդ շրջաբերակա-
նին մէջ՝ Ս. Պատրիարք Հայրը ծանուցանե-
լով թէ սրբանոցներու տեւողութեան պայմա-
նաժամը լրանալուն առթիւ, մնայուն եւ կա-
նոնաւոր արհեստանոցներ պիտի հաստատ-
ուին գաւառական գլխաւոր կեդրոններու
մէջ, նպատակ սննեակով զիշերթիկ պա-
տըսպարեալներու եւ ցերեկեայ տղաքներու
արհեստ սորվեցնել, կոչում կրնէ բարեսէր
ազգայիններու գթութեան՝ իրենց նիւթական
օժանդակութեամբ նպաստելու համար այս
օգտակար ձեռնարկին :

Տ. Երեցեան Սրբազան, ասկէ առաջ, Տ.
Ներսէս վրդ. Դանիէլեանի պաշտօն յանձնած
էր՝ իր անուամբ շնորհակալութիւն յայտնել
Աստուայէ զրկուած շնորհաւորական հեռագ-
րերուն ու նամակներուն համար : Դանիէլեան
վրդ. երեքշաբթի օրը Ն. Սրբազնութեան
յանձնեց՝ ստացած պատասխանները :

Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը,
Կազանդին օրը, երեք օրինակ 1902ի ըն-
դարձակ եւ ժառակալով Օրացոյց՝ շնորհաւո-
րական ուղերձով մը մէկտեղ՝ նախած է Ս.
Պատրիարք Հօր, ձեռամբ Հիւանդանոցի
գրասենեակի տեսուչ Մաքսուտ Էֆ. Խիւ-
տավէրեանի :

Ուրախ ենք իմանալով՝ այս առթիւ, թէ
ընդարձակ Օրացոյցը ակնկալուած սպասումը
կը գտնէ, թէ՛ այս տեղ եւ թէ՛ գաւառնե-
րէն հասած սպասարանքներով, — սպասում
մը սրուն լիովին արժանի է այդ ստուար
հատորը՝ իր ճոխ ու բազմատեսակ պարու-
նակութեամբ :

Իզմիրի Ներսէսեան Որբանոցի վարչու-
թիւնը՝ տպեալ շրջաբերակա՞նով մը այդ հաս-
տատութեան նիւթական տաղանապայից վի-
ճակը պարզելով, գիտնում ըրած է տեղւոյն
ազգայիններուն, որպէս զի իրենց նպաստնե-
րով փութան օգնել այս մարդասիրական հաս-
տատութեան եւ վերահաս կործանումէ մը
փրկեն զայն : Ներսէսեան Որբանոցի վարիչները
անձամբ կը շրջին հասարակութեան մէջ եւ

նպատակ կը հաւաքեն իւրաքանչիւր անհատի
կարողութեան համաձայն : Տարակոյս չու-
նինք որ Իզմիրի ազգայինները իրենց նուէր-
ներով լիովին պիտի արգելաւորեն այս բա-
րենդատակ գիտումը :

Աւաբիլիբի առաջնորդ Տ. Մուշեղ վարդա-
պետի գիտումն վրայ՝ Ակնայ թեմը անջատ-
ուելով Արարիկի թեմէն, առանձին Վիճակ
մը կը կազմէ այսուհետեւ, առաջն. տեղա-
պահ ունենալով Տ. Գէորգ վրդ. Ասլանեանը
որ չորս ամիս ի վեր հոն կը գտնուի արդէն :
Ակնայ Թառն Ժողովը այս առթիւ շնորհա-
կալութեան գիր մը ուղղած է Տ. Մուշեղ
վարդապետին որ քանի մը տարիէ ի վեր
արժանաւորապէս հովուեց նաեւ իրենց թեմը :

Պատրիարքական Պէրպէրեան Էֆ. ի համակ-
րողներ արձակեաց գեղակերտ կազմար մը
եւ գրիչ մը շինել տալով, զրկած են իրր
նուէր յարգելի յոբելեարին :

Լասիւնաց Ծննդեան աստիճան առթիւ, Իզ-
միրի Ս. առաջնորդը այցելութիւն տուեր է
տեղւոյն Լատինաց Արքեպիսկոպոսին եւ Գեր-
մանացոյց ու Անգլիացոյց հովիւներուն : Անգ-
լիացի Վերապ. երէցը փափագ յայտնած է
որ, — ինչպէս կը կարգանք Արեւելեան Մա-
մուրի մէջ, — կանխաւ լուր տրուի իրեն՝
ներկայ գանուելու Հայոց Ս. Ծննդեան եւ
Մկրտութեան աստիճան արարողութեան, քանի
մը անգլիացի նշանաւոր ընտանիքներու հետ :

Գաւառային այն սակաւաթիւ բաժանորդ-
ներէն, որոնք սակաւին չեն կարգադրած
Մաւիաի 1901 տարեշաբթի հաշիւը, կը խնդ-
րենք որ փութան իրենց բաժանորդագիրը
կա՛մ յանձնել իրենց քաղքին մեջ գտնուած մեր
գործակալին եւ կա՛մ դիկել խմբագրութեան :
Նոյնպէս կը խնդրենք մեր գաւառային գոր-
ծակալներէն անոնցմէ որոնք վերջացող տրջա-
նին հաշուեփակը չեն ըրած սակաւին, որ
հաճին հաշուեցոյցով մը մեկտեղ դիկել մեր
պահանջքի գումարին վերջին մնացորդը :

Արժանատի Կ. Ս. ԻԻԹԻՆՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՆՆԱՆ
Կ. Պոլիս. Ֆինանսըր Եօգուչու, Թիւ 27

Ի Ի Ն Ի Յ Ն

Հ Ր Դ Ե Հ Ի Ե Ի Կ Ե Ն Ա Յ

Ա Պ Ս Ն Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Ս Ս Ա Տ Ե Ա Լ Ի Բ Ա Ր Ի Զ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 Քր.
1899ին գանձուած ապահովագին	19,500,000 »
Գրամազուրի եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամազուրի	18,000,000,000 »

Կ Ե Ն Ա Յ Ճ Ի Ի Ղ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Գրամազուրի եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Ք Վ .

Արեւելքի համար մնանաւոր սակացոյց գեղջեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրուողք ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ Եւրոպայի ընկերութիւններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒՐԻ Եւ ՎԼԱՍԱԿԱՐ իրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Թահեսպուրուն խան, Օսմ. Պանֆային դիւանք

Գործակալութիւնք Թուրքիո գլխաւոր քաղաքաց մէջ

Հ Ա Ս Ս Ա Տ Ե Ա Լ 1884ԻՆ

Հ Ա Ն Ր Ա Մ Ա Ն Յ Թ Շ Ա Պ Ի Կ Ի Գ Ո Ր Մ Ա Ր Ա Ն Ա Տ Ե Ի

Ա Ր Դ Ո Ւ Ջ Ա Ր Դ Ի Մ Ե Մ Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

Մ . Տ Ե Ր - Դ Ա Ի Ի Թ Ե Ա Ն

Թիւ 85 — Կալարա, Վոյլոնսա փողոց — Թիւ 85

Սրտա խնամով ու աստիճանական աճան գիներով չափու վրայ կը պատրաստուին ու մէն տեսակ չապիկ, օձիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ :

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպաներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը արամազուրի է ընդունիլ ու կատարեալ հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ :

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աճան գիներով օձիք, թեւնոց, Գլանէլ, գուլպայ, թաշկինակ, սոկեզօձ կոճակներ, փողկապ, գրամապիակ, զմեկի «Չէֆրլա», խոզանակ, սանար ու անուշահամութեանց լաւագոյն տեսակներ :

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան, ազրանոց ազնուութեան, յանձնարարութեանց խնամով պատրաստութեան, ու գիներու աճանութեան անտակետով վաճառելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տեսակներն ձգէ է :

Գ Ի Ն Ե Ր Ը ՈՐՈՇԵԱԼ ԵՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՏՈՔԹ, Գ, ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 200

Կալաբա-Սերայի Լիսեին դեմ

Ամեն օր ժամը 5—11 (Ը. Ե.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏՈՔԹ, Ե, ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՍ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 15

Բացի սովորական ներքին հրանդու-
թիւններէ՝ կը դարձանէ մասնաւորաբար,
նոր մեթոաներով եւ խնամով, ստանոֆսի,
աղեսաց, միզական ճանքաներու հրան-
դութիւնները, ջրային սխարուքիւնները,
գաղիական ախետը (սիֆիլիս եւլն) եւ
ւնորթի հրանդութիւնները :

Հրանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ
վերջը :

Ա Ր Ի Ս ԵՒ ԸՆԿ

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱԲԱԼԷ



Վաճառորդ



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենա-
ներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամե-
նանորը հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ :

Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրա-
նաց դէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիններու գերազանց աժանութիւնը :
Փափաքողներուն՝ քաթարօլը ձրի կը զրկուի :

Մեծաքանակ գնում րնել ուղղութեամբ կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՈՍՏԻ ՊԱԲ
ԵՒ Կ. ԻՆՃԻՃԻՆԱՆ ՈՐԴԻՔ վաճառատունները, իսկ գաւառներու եւ օտար երկիր-
ներու մէջ զիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու
ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

- ԲԱՐԻՁ. — ՊՊ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ
Շաբօտեռ :
- ՊՈՄՊԱՅ. — ՊՊ. Ապքար եւ Ընկ.
- ԱՂԵՔՍԱՆՆԻՐԻՍ. — Պ. Մ. Գալփեան
- ԳԱՀԻՐԷ. — Պ. Հ. Ռոզանբայ :
- ՌՈՒՍՃՈՒԳ. — Պ. Պ. Կ. Ինճիճեան Որդիք :
- ՎԱՌՆԱ. — Պ. Կեռոն Արտիքի :
- ԻՋՄԻՏ. — Պ. Յակոբ Մոմճեան

- ՋՄԻՌՆԻՍ. — Պ. Հայրիկ Վառնիկ :
- ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տիւօ Ֆերնանտեզ :
- ԻԻՍԿԻԻՊ. — Պ. Մ. Միքայիլեան :
- ՊԵՐՈՒՐ. — Պ. Ֆրանքէլ Շիֆֆեր :
- ՍԱՄՍՈՆ. — Պ. Պ. Պետրոսեան Նորարք :
- ՏՐԱՊԻՋՈՆ. — Պ. Արիս Կ. Ինճիճեան :
- ՍԵՐԱՍԻՍ. — Պ. Պ. Վ. Մ. Մեծատուրեան
- ՌՈՏՍՈՒՐ. — Պ. Յակոբ Բուօլատայ